Հաստատում եմ / / Ա. Շեգունց

# Գորիսի 4 ավագ դպրոց

Հայոց լեզվի թեմատիկ պլանավորում 2022-2023 ուստարի

XI բնագիտամաթեմատիկական դասարան

Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչուհի Վարդուհի էդիկի Մկրտչյան

Շաբաթական 2 դասաժամ , տարեկան 68 դասաժամ

| Ուսուցանվող նյութը | Ժամաքանակը | Դասերը | Ռուսցման նպատակը | |
|---|---|---|---|---|
| Գրական լեզու և բարբառներ: Ժամանակակից գրական հայերենի երկու տարբերակները, նրանց բարբառային հիմքերը: Արևելահայերենի և արևմտահայերենի հիմնական հնչյունական, բառապաշարային, ձևաբանական տարբերությունները | 2 ժամ | • Գրական լեզու և բարբառներ Ժամանակակից գրական հայերենի երկու տարբերակները, նրանց բարբառային հիմքերը (1 ժամ)<br>• Արևելահայերերնի և արևմտահայերենի հիմնական հնչյունական, բառապաշարային, ձևաբանական տարբերությունները (1 ժամ) | **Իմանա՝ Ա**. Լեզվի բարբառների և գրական լեզվի բարբառային հիմքի մասին<br>**Բ**. Արևմտահայերենի բառապաշարը<br>**Գ**. Արևմտահայերենի բառապաշարի լեզվաոճական առանձնահատկությունները<br>**Կարողանա ՝**<br>**Ա**. Արևմտահայ բնագրերը կարդա<br>**Բ**.Արևմտահայ բնագրերը կարդա և հասկանա<br>**Գ**. Արևմտահայ բնագրերը կարդա , հասկանա , մեկնաբանի | Ընթերցել արևմտահայերեն բնագրեր<br><br>տեքստում նշել միայն արևմտահայերենին բնորոշ քերականական ձևեր , բառեր , արտահայտություններ |
| **Ձևաբանություն:** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հայերենի խոսքի մասերի համակարգը. Նյութական իմաստ ունեցող և սպասարկու խոսքի մասերի դերը նախադասությունների կառուցվածքում:<br>Գոյականի և բայի հարացույցները՝ բառերի ձևափոխությունները, և նրանց կիրառությունը խոսքում:<br>Գոյականի, ածականի և մակբայի հոմանիշային շարքերը,նրանց ոճական արժեքը և կիրառությունը խոսքում: | 6 ժամ | • Ձևաբանություն: Բառային իմաստ և քերականական իմաստ, ձևույթներ (2 ժամ)<br>• Հայերենի խոսքի մասերի համակարգը (նյութական, քերականական վերաբերմունքային) (2 ժամ)<br>• Նյութական իմաստ ունեցող և սպասարկող խոսքի մասերի դերը նախադասությունների կառուցվածքում (2 ժամ) | **Իմանա՝**<br>**Ա.** հայերենի խոսքի մասերի համակարգը<br>**Բ.** Նյութական իմաստ ունեցող և սպասարկու խոսքի մասերի դերը նախադասությունների կառուցվածքում:<br>**Գ.** Գոյականի և բայի հարացույցները՝ բառերի ձևափոխությունները, և նրանց կիրառությունը խոսքում: | Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական արմատ և նախածանց կազմել նախածանցավոր բառեր:<br>Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական արմատ և վերջածանց կազմել վերջածանցավոր բառեր:<br>Տրված բառերը դասավորել ըստ նրանց արտահայտած նյութական, քերականական, վերաբերմունքային իմաստների: |
| Գոյական անուն | 8 ժամ | • Գոյական անուն. Իրանիշ և անձնանիշ գոյականներ. հատուկ և հասարակ գոյականներ. հատուկ անունների գրությունը և ուղղագրությունը (2ժամ)<br>• Գոյական թվի կարգը (եզակի և հոգնակի) (1 ժամ)<br>• Գոյականի առումը (որոշյալ և անորոշ) Հոդ (ստացական, դիմորոշ, ցուցական) (1 ժամ)<br>• Գոյականի հոլովները և հոլովումը (4 ժամ) | **Կարողանա՝**<br>**Ա.** Կառուցի գրավոր և բանավոր խոսք ՝ դրսևորելով հայերենի քերականական կառուցվածքի , լեզվառճական առանձնահատկությունները<br>**Բ.** Որոշել գրվածքի ոճը և նրա հատկանիշները բնագրում<br>**Գ.** Բնագրում գտնել և գնահատել գաղափարների , զգացմունքների , վերաբերմունքի արտահայտման ձևերն ու միջոցները | Բնագրի վերլուծություն ՝ առանձնացնել հարացուցային ձևերը և բնութագրել դրանք<br>Թեստային աշխատանք գոյականի հարացուցային ձևերի վերաբերյալ<br>Աշխատանք բնագրի վրա ածականի և մակբայի մակդիրային կիրառության վերաբերյալ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Թեմատիկ գրավոր աշխատանք** | 1 ժամ | | | |
| **Բայ** | 13 ժամ | • Բայ. դիմավոր և անդեմ բայեր: Դերբայներ (անորոշ, համակատար, ենթակայական, հարակատար) (1 ժամ)<br>• Ձևաբայեր (անկատար, ապակատար, վաղակատար, ժխտական) (1 ժամ)<br>• Բայի խոնարհումը (եղանակ, ժամանակ, դեմք, թիվ, դրական և ժխտական խոնարհումներ) (2 ժամ)<br>• Սահմանական եղանակ. Սահմանական եղանակի ժամանակային ձևերը (անկատար ներկա և անկատար անցյալ, ապակատար ներկա և ապակատար անցյալ, վաղակատար ներկա և վաղակատար անցյալ, անցյալ կատարյալ) (2 ժամ)<br>• Հրամայական եղանակ (1 ժամ)<br>• Ըղձական եղանակ Ենթադրական (պայմանական) եղանակ (1 ժամ)<br>• Հարկադրական եղանակ (1 ժամ)<br>• Ժխտական խոնարհում (1 ժամ)<br>• Գոյականի և բայի հարացույցները՝ բառերի ձևափոխությունները, և նրանց կիրառությունը խոսքում (2 ժամ)<br>• Գոյականի, ածականի և մակբայի հոմանիշային շարքերը, նրանց ոճական արժեքը և կիրառությունը | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | խոսքում (1 ժամ) | | |
| Թեմատիկ գրավոր աշխատանք | 1 ժամ | | | |
| Կրկնություն | 1 ժամ | | | |
| ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ | | | | |
| Շարահյուսություն: Շարահյուսական հոմանիշներ (բարդ բառ և բառակապակցություն, հոլովաձև և կապական կառույց, դերբայական դարձված և երկրորդական նախադասություն, ուղղակի և անուղղակի խոսք): Նախադասությունների հաղորդակցական տեսակները, նրանց հնչերանգը և կետադրությունը: | 20 ժամ | • Շարահյուսություն, շարահյուսական հոմանիշներ (1 ժամ)<br>• Բարդ բառ և բառակապակցություն, հոլովաձև և կապական կառույց (2 ժամ)<br>• Դերբայական դարձված և երկրորդական նախադասություն. Դերբայական դարձվածի կետադրությունը (3 ժամ)<br>• Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի և հակառակը (2 ժամ)<br>• Բարդ ստորադասական նախադասության իմաստային–քերականական առանձնահատկությունները (2 ժամ)<br>• Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք (1 ժամ)<br>• Մեջբերվող ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակիի (1 ժամ)<br>• Ուղղակի խոքսի կետադրությունը (1 ժամ)<br>• Ներգործական և կրավորական կառույցներ, նրանց փոխակերպումը (1 ժամ)<br>• Թեմայի ամփոփում | **Իմանա ՝ Ա.** Շարահյուսական հոմանիշների հետ կապված կետադրությունը<br>**Բ.** Նախադասությունների հաղորդակցական տեսակները<br>**Գ.** Հայերենի կետադրությունը<br>**Կարողանա ՝**<br>**Ա.** Կետադրի համր բնագրեր<br>**Բ.** Կետադրի համր բնագրեր, բացատրի կետադրությունը<br>**Գ.** Կառուցի տեքստ՝ օգտագործելով կետադրական տարբեր կանոնների վերաբերող ձևեր | Արտագրել՝ փակագծերում տրված հոմանիշներից ընտրելով իմաստով և ոճականորեն համապատասխանողը<br>Յուրաքանչյուր կապակցության իմաստն արտահայտել մեկ բառով:<br>Գտնել և դուրս գրել դերբայական դարձվածները<br>Բնագրի նշված միավորները փոխարինել համապատասխան շարահյուսական հոմանիշներով<br>Թեստային աշխատանք կետադրության վերաբերյալ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • Թեմատիկ գրավոր աշխատանք<br>• Նախադասությունների հաղորդակցական տեսակները, նրանց հնչերանգը և կետադրությունը (2 ժամ) | | |
| **Հայերենի կետադրության համակարգը** | 6 ժամ | • Հայերենի կետադրության համակարգը<br>Տրոհության նշաններ(2 ժամ)<br>Բացահայտության նշաններ(2 ժամ)<br>Առոգանության նշաններ(2 ժամ) | | |
| Գիտական տեքստ:<br>Գիտական ոճի բնորոշ առանձնահատկությունները ՝ խոսքի ճշգրտություն, տրամաբանվածություն, հետևողականություն, գիտական տերմինաբանության կիրառում | 7 ժամ | • ԳԻտական ոճի բնորոշ առանձնահատկությունները (2 ժամ)<br>• Գիտական ոճի բառապաշարը (2 ժամ)<br>• Գիտական ոճի քերականական առանձնահատկությունները (3 ժամ) | **Իմանա ՝ Ա**. Գիտական բնագրեր կազմելը<br>**Բ**. Տարբեր գիտությունների տերմինային համակարգերը<br>**Գ**. Տարբեր գիտությունների տերմինային համակարգերը, հանդես գա զեկուցումներով , ռեֆերատներով | Գիտական բնագրերի կազմում / ռեֆերատ , զեկուցում , հաղորդում , հոդված և այլն /<br>Կազմել մասնագիտական տերմինների բառացանկեր ըստ ուսումնասիրվող առարկաների<br>Բառարաններից գտնել բառերի տերմինային և ընդհանուր լեզվական իմաստների սահմանումները |
| Թեմատիկ գրավոր աշխատանք | 1 ժամ | | | |
| Կրկնություն | 1ժամ | | | |
| Կրկնություն | 1ժամ | | | |

Հաստատում եմ / / Ա. Շեգունց

# Գորիսի 4 ավագ դպրոց

2022-2023 ուստարի

## Հայոց գրականության թեմատիկ պլանավորում

XI տնտեսագիտական դասարան

Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչուհի Կարդուհի Էդիկի Մկրտչյան

Շաբաթական 2 դասաժամ , տարեկան 68 դասաժամ

| Ուսուցանվող նյութը | Ժամաքանակը | Դասերը | Ռուսցման նպատակը | Ուսումնական գործունեությունը |
|---|---|---|---|---|
| Նար-Դոս | 4 ժամ | 1. Նար-Դոսի կանքը<br>2. Ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>3-4 «Սպանված աղավնին» վիպակը: | **Իմանա՝**<br>**Ա**.հայ դասական գրականության մեծերին ,նրանց հիմնական երկերը<br>**Բ**.հայ գրականության զարգացման ընդհանուր օրինաչափությունները<br>**Գ**.հայ գասական գրականությանմեջ որոշակի ավանդ ունեցող գրողներին<br>**Կարողանա՝**<br>**Ա**. Մեկնաբանել , վերլուծել , վերարտադրել կարդացածը<br>**Բ**.վերաշարադրել կարդացածը ՝ հակիրճ կամ մանրամասնորեն ՝ զուգորդելով սեփական դատողություններով , եզրզհանգումներով<br>**Գ**.վերլուծել գրական երկի կառուցվածքային , բովանդակային , և գեղագիտական առանձնահատկությունները | Վերլուծական շարադրանքներ ՝ գրական երկի , հեղինակի գրական ժառանգության , գրողի ոճի , կերպարի բնութագրման վերաբերյալ |
| Գրիգոր Զոհրապ | 4 ժամ | 1. Գրիգոր Զոհրապի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը<br>2.«Ճիտին պարտքը» նորավեպը:<br>3. «Երջանիկ մահը» նորավեպը:<br>4. «Զաբուղոն» նորավեպը: | | Բառային աշխատանք ՝ ստեղծագործության բառապաշարի ոճական քննություն , հոմանիշների , հականիշների , հնաբանությունների , նորաբանությունների ոճական կիրառության բացահայտում և գնահատում |
| Հովհաննես Թումանյան | 9 ժամ | 1. Հովհաննես Թումանյանի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>2.Հայրենասիրական քնարերգությունը «Հայոդ լեռներում» բանաստեղծությունը:<br>. «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը:<br>. «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը:<br>. «Հայոց վիշտը» բանաստեղծությունը:<br>4,5,6. «Անուշ» պոեմը: | | Գրականության և արվեստի այլ տեսակների համեմատական քննություն , գրական երկի հիման վրա ստեղծված օպերաների , թատերական ներկայացումների , կինոնկարների դիտում և քննարկում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 7. Քառյակներ:<br>8. «Գիքորը» պատմվածքը:<br>9. «Գելը»պատմվածքը:<br>. Ամփոփում: | | |
| | 1 | Թեմատիկ գրավոր աշխատանք | | |
| Ավետիք Իսահակյան | 7ժամ | 1. Ավետիք Իսահակյանի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>2-3. «Աբու-Լալա Մահարի» պոեմը:<br>4. «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը:<br>5. «Ապետի սերը»:<br>6. «Հայրենի հողը»:<br>7. «Լիլիթ» պատմվածքը: | **Իմանա** `<br>**Ա.**արդի հայ գրականության նշանավոր դեմքերին և նրանց ստեղծագքրծությունները<br>**Բ.**գրական սեռերն ու ժանրերը<br>**Գ.**հայ գրականության տեղն ու դերը հայ մշակույթի մեջ , կապը արվեստի այլ տեսակների հետ<br>**Կարողանա** `<br>**Ա.**ընկալել տեքստի ամբողջականությունը և առանձին հատվածների կապը ամբողջի և միմյանց հետ<br>**Բ.**դիտարկել և մանրամասն վերլուծել սյուժեի զարգացման ընթացքը , առաջարկել նոր լուծումներ<br>**Գ.**մասնակցել դերային խաղերի , բեմականացումների ` կերպավորելով այս կամ այն գրական հերոսին , առաջադրել գրական երկում ծավալվող դեպքերի , գործողությունների զարգացման սեփական վարկածը | Գրական բանավեճ և քննարկում |
| Լևոն Շանթ | 4 ժամ | 1.Լևոն Շանթի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>2-4. «Հին աստվածներ» դրաման: | | Բեմականացում ըստ <<Հին աստվածներ >> դրամայի |
| | | | | |
| Ատոմ Յարճանյան Սիամաթո | 3 ժամ | 1. Ատոմ Յարճանյանի (Սիամանթո) կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>2. «Հողին ձայնը» բանաստեղծությունը:<br>3. «Մահվան տեսիլք» բանաստեղծությունը: | | Արևելահայ և արևամտահայ բանաստեղծների առանձին ստեղծագործությունների լեզվաոճական վերլուծություն և համեմատական քննություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դանիել Վարուժան | 4ժամ | 1. Դանիել Վարուժանի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>2-3. «Հեթանոս երգեր» ժողովածուն: «Հարճը» պոեմը:<br>4. «Հացին երգը» ժողովածուն | **Իմանա՝**<br>**Ա.** Արևմտահայ բանաստեղծներին<br>**Բ.**արևմտահայ գրականության լեզվաոճական առանձնահատկությունները<br>**Գ.** Հայ գրականության մեջ 20-րդ դարասկզբի աշխարհաքաղաքական տեղաշարժերի գեղարվեստական վերարտադրություն<br>**Կարողանա՝**<br>**Ա.** արևմտահայ գրականությունը ընթերցի և հասկանա<br>**Բ.** Գեղարվեստական երկի լեզվաոճական առանջնահատկությունները քննի<br>**Գ.**Գեղարվեստական երկի լեզվաոճական առանջնահատկությունները քննի և բնութագրի | Պատմել՝ օգտվելով այլ աղբյուրներից:<br>Ներկայացնել ժամանակաշրջանը, շարքերի թեմաները: |
| Միսաք Մեծարենց | 4 ժամ | 1. Միսաք Մեծարենցի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>2. Բնությունը Մեծարենցի ստեղծագործություններում: «Աքասիաններու շուքին տակ» բանաստեղծութունը:<br>3. «Տո՜ւր ինծի, տե՜ր» բանաստեղծությունը:<br>4. «Միրերգ» բանաստեղծությունը: | | Պատմել՝ օգտվելով այլ աղբյուրներից |
| Վահան Տերյան | 5ժամ | 1. Վահան Տերյանի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>2. «Մթնշաղի անուրջներ»,<br>3. «Գիշեր և հուշեր»,<br>4. «Երկիր Նաիրի» շարքերը:<br>5. Բանաստեղծությունները: | | Բանաստեղծությունների անգիր արտասանություն , լեզվաոճական վերլուծություն , պատկերային համակարգի քննություն |
| | 1 | Թեմատիկ գրավոր աշխատանք | | |
| Նորագույն շրջանի հայ գրականությունը: Զնավորումը, պատմաքաղաքակա | 1 ժամ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ն իրավիճակը: Գրական ուղղություններ և հոսանքներ: Զարգացման փուլերը: | | | | |
| Եղիշե Չարենց | 8ժամ | 1. Եղիշե Չարենցի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>2. «Դանթեական առասպել» պոեմը:<br>3-4 «Ամբոխները խելագարված» պոեմը:<br>5. «Տաղ անձնական» բանաստեղծությունը:<br>. «Հեռացումի խոսքեր» բանաստեղծությունը:<br>6. «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը:<br>7. «Անվերնագիր» բանաստեղծությունը:<br>8. «Գիրք ճանապարհին» ժողովածուն: | **Իմանա** ՝<br>**Ա.** Չարենցի ստեղծագործության նշանակությունը<br>**Բ.**Նրա բերած ժանրային նորությունների բնութագիրը<br>**Գ.** Նրա բերած ժանրային , տաղաչափական նորությունների բնութագիրը<br>**Կարողանա** ՝ **Ա.** Երկերի պատկերավորման համակարգի ընկալում<br>**Բ.**գեղարվեստական արտահայտչամիջոցները տարբերակի և բնութագրի<br>**Գ.**չափածո երկերի տաղաչափության , հանգավորման և բանաստեղծական արվեստի այլ առանձնահատկությունների ընկալման կարողությունների խորացում | Գրական – երաժշտական ցերեկույթներ , դասեր Մեկնաբանել: Ի՞նչ հանգամանքների տպավորությամբ է ստեղծվել «Դանթեական առասպել» պոեմը: |
| Դերենիկ Դեմիրճյան | 4 ժամ | 1.Դերենիկ Դեմիրճյանի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>2-4. «Վարդանանք» պատմավեպը: | Իմանա ՝ Ա. Պատմավեպի ժանրային յուրահատկությունները<br>Բ. Պատմական աղբյուրները, պատմական կերպարները | «Վարդանանք» պատմավեպի որևէ դրվագի բեմականացում / մերժողական թղթի պատասխանը , Վարդանը ճակատամարտից առաջ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ակսել Բակունց | 5ժամ | 1. Ակսել Բակունցի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:<br>2. «Ալպիական մանուշակ» պատմվածքը:<br>3. «Մթնաձորի չարքը» պատմվածքը:<br>4 «Խոնարի աղջիկը» պատմվածքը:<br>. «Միրհավ» պատմվածքը:<br>5. «Ծիրանի փողը» պատմվածքը: | | Ակսել Բակունցի պատմվածքների ընթերցում<br>Դաս ակսել Բակունցի տուն թանգարանում<br>Ակսել Բակունցի պատմվածքների լեզվաոճական առանձնահատկությունների քննություն |
| | **1** | | | |
| | **68** | | | |